

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանը
հայտարարում է մրցույթ՝

ՀՀ Արարատի մարզպետարանի ենթակայության առողջապահական պետական
ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների հետևյալ թափուր պաշտոնները
գրադեցնելու համար

1. << Նոր Խարբերդի ԱԱՊԿ >> ՊՈԱԿ-ի տնօրեն
2. << Նոյակերտի ԱԱՊԿ >> ՊՈԱԿ-ի տնօրեն
3. <<Այգեգարդի ԱԱՊԿ >> ՊՈԱԿ-ի տնօրեն
4. <<Հովտաշատի ԱԱՊԿ >> ՊՈԱԿ-ի տնօրեն
5. <<Քաղցրաշենի ԱԱՊԿ >> ՊՈԱԿ-ի տնօրեն
6. <<Արևշատի ԱԱՊԿ >> ՊՈԱԿ-ի տնօրեն

Տնօրենի ընտրության (նշանակման) պարտադիր պայմաններն են՝

- 1) բարձրագույն բժշկական կրթություն և հետբուհական կրթություն ներքին հիվանդություններ (թերապիա), կամ մանկաբուժություն կամ ընտանեկան բժշկություն մասնագիտությամբ,
- 2) առնվազն 3 տարվա մասնագիտական ստաժ կամ բժշկական ոլորտի ձեռնարկատիրական կամ առողջապահական համակարգի կառավարման ոլորտի առնվազն 2 տարվա ստաժ,
- 3) իր պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, բաժնետիրական ընկերությունների, աշխատանքային, առողջապահության ոլորտի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրություն և այլ իրավական ակտեր),
- 4) կազմակերպության զարգացման ծրագրեր մշակելու կարողություն,
- 5) աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություն, ներառյալ՝ ա. ստորաբաժանումների աշխատանքների կազմակերպման, բ. անձնակազմի աշխատանքի ընդունման, ազատման և վերապատրաստման գործընթացների կազմակերպման, գ. աշխատանքների բաշխման, դ. կարգապահական պատասխանատվության, ե. խրախուսանքի միջոցների կիրառման,
- 6) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,
- 7) ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն, ներառյալ՝ գույքի, ներառյալ ֆինանսական միջոցների տնօրինման, և գործարքներ կնքելու կարողություններ,

8) բժշկական ծառայությունների պատշաճ մատուցման, ինչպես նաև անձնակազմի կողմից ռեսուրսների արդյունավետ օգտագործման և լրացուցիչ աշխատողների, սարքավորումների և ծառայությունների անհրաժեշտության գնահատում

9) չի լրացել հավակնորդի 65 տարին

Լրացուցիչ պայմաններն են՝

- 1) տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն
- 2) ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն
- 3) օտար լեզվի իմացություն

Մրցույթը կկայանա 2019 թվականի սեպտեմբերի 24-ին՝

1. <<Նոր Խարբերդի ԱԱՊԿ >> ՊՈԱԿ-ի տնօրեն ժ. 11:00 -ին:
2. <<Հովտաշատի ԱԱՊԿ>> ՊՈԱԿ-ի տնօրեն ժ. 14:00 -ին:

Մրցույթը կկայանա 2019 թվականի սեպտեմբերի 26-ին՝

1. <<Նոյակերտի ԱԱՊԿ >> ՊՈԱԿ-ի տնօրեն ժ. 11:00 -ին:
2. <<Այգեգարդի ԱԱՊԿ >> ՊՈԱԿ-ի տնօրեն ժ. 14:00 -ին:

Մրցույթը կկայանա 2019 թվականի սեպտեմբերի 27-ին՝

1. <<Քաղցրաշենի ԱԱՊԿ>> ՊՈԱԿ-ի տնօրեն ժ. 11:00 -ին:
2. <<Արևշատի ԱԱՊԿ>> ՊՈԱԿ-ի տնօրեն տնօրեն ժ. 14:00 -ին:

Մրցույթին մասնակցելու համար քաղաքացիները Արարատի մարզպետարան են ներկայացնում՝

- 1) դիմում.
- 2) մեկ լուսանկար 3 x 4 չափի.
- 3) քաղվածք՝ աշխատանքային գրքույկից.
- 4) ինքնակենսագրություն.
- 5) անձնագրի, բարձրագույն կրթության դիպլոմի (արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի) պատճենները.
- 6) քաղաքացու ցանկությամբ՝ հրապարակված հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ՝ դրանց առկայության դեպքում.
- 7) բնութագիր՝ վերջին աշխատավայրից (եթե կազմակերպությունը չի լուծարվել).
- 8) կազմակերպության զարգացման նախնական ծրագիրը (ներկայացվում է մրցույթի օրվանից առնվազն երեք օր առաջ), որը ներառում է կազմակերպության զարգացման և

բարեփոխման, ինչպես նաև կազմակերպության մասնագիտական, ֆինանսատնտեսական և կառավարման ոլորտի զարգացման հիմնական ուղենիշները, կազմակերպության կառուցվածքի և գործունեության բարեփոխմանն ուղղված առաջարկությունները:

9.Քաղաքացին մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր և պահանջվող փաստաթղթերի բնօրինակները:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր, ժամը 9⁰⁰ -17⁰⁰ -ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Գիմումների ընդունման վերջին ժամկետն է 2019 թվականի օգոստոսի 12 –ը:

Մրցույթը կկայանա Արարատի մարզպետարանի շենքում (ք.Արտաշատ , Օգոստոսի 23/60): Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկությունների, ինչպես նաև հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Արարատի մարզպետարան (ք.Արտաշատ, Օգոստոսի 23/60, անձնակազմի կառավարման բաժին, հեռ.0235 2-45-11):